# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

## Ն Ա Խ Ա Գ Ա Հ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

21. 02. 23 N 01/14.1/2095-2023

ՀՀ կենտրոնական ընտրական
հանձնաժողովի նախագահ
պարոն Վահագն ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻՆ

2023 թվականի փետրվարի 16-ի
N 01/11/54-2023 գրություն

Հարգելի պարոն Հովակիմյան

Կից ներկայացվում է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի վարչական շենքի վերակառուցման համար անհրաժեշտ խոշորացված ծախսերի հաշվարկը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ օբյեկտների խոշորացված ծախսերը ենթակա են հստակեցման սահմանված կարգով մշակված նախագծանախահաշվային փաստաթղթերի շրջանակներում:

Առդիր՝ 1 ֆայլ:

Հարգանքով՝

2/21/2023

X

Signed by: GHULARYAN ARMEN 3509540050

Արմեն ՂՈՒԼԱՐՅԱՆ

Շինարարության և գիտատեխնիկական նորմավորման
վարչության պետ Ռուզան Ադամյան 011 621 804

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՄՏՔ.N 76
«21» 02 2023 թ.

**ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի Երևան քաղաքի Գ. Քոչար 21ա հասցեում գտնվող վարչական շենքի վերակառուցման աշխատանքների հաշվարկ**

ՀՀ քաղաքաշինության նախարարի 03.04.2009թ N 35-Ն հրամանի համաձայն.

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի Երևան քաղաքի Գ. Քոչար 21ա հասցեում գտնվող վարչական շենքի 1557.0 քմ տարածքի շինարարական աշխատանքների ընհանուր արժեքը խոշորացված ցուցանիշներով /ՇԱԽՑ/ կազմում է՝

**1557.0 քմ x 182.79 x 1.29 x 1.2 ≈ 440,000.0 հազ.դրամ,**

որտեղ.

1.29 - 2008-2023թթ. գնաճի գործակից (2008թ. - 305 դրամ; 2023թ. փետրվարի 17-ի դրությամբ ԿԲ տվյալներով – 393.520 դրամ),

1.2 – ԱԱՀ (20%) գործակից:

ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի փետրվարի 15-ի N 19-Ն հրամանի համաձայն

1) օբյեկտն ըստ բարդության 4-րդ կարգի է,

2) նախագծանախահաշվային փաստաթղթերի խոշորացված/մոտավոր արժեքը կկազմի.

**440,000.0 հազ.դրամ x 4,5% ≈ 19,800.0 հազ.դրամ:**

**Բացի այդ, նախագծման նախապատրաստական փուլում կպահանջվի լիցենզավորված կազմակերպությունների կողմից**

1. Շենքի տեխնիկական վիճակի հետազննության ուսումնասիրություն՝ պայմանագրային հիմունքներով (1-1.5 մլն.դրամ)

2. Տարածքի ինժեներաերկրաբանական հետազննություն՝ պայմանագրային հիմունքներով (1-1.5մլն.դրամ), որոնց ձեռքբերումը տեխնիկական առաջադրանքի շրջանակներում հնարավոր է վերապահել Նախագծային կազմակերպությանը :

**Արդյունքում՝ նախագծման ծախսերը կկազմեն**
**19,800.0 + 1,000.0 + 1,000.0 ≈ 21,800.0 հազ.դրամ**

ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի N 879-Ն որոշմամբ հաստատված N8 հավելվածի համաձայն՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի պարտադիր փորձաքննության արժեքը կկազմի՝

**21,800.0 հազ.դրամ x 6,0% ≈ 1,300.0 հազ.դրամ:**

Ծրագրի իրագործման խոշորացված ծախսերը կկազմեն՝

**440,000.0 + 21,800.0 + 1,300.0 ≈ 463,100.0 հազ.դրամ:**

Տվյալ հաշվարկով նախատեսված ծախսերը ենթակա են ճշգրտման սահմանված կարգով մշակված նախագծային փաստաթղթերի և կնքվող պայմանագրերի շրջանակներում: